կը բարեխղճորեն կատարած դիտողությունների հիման վրա նկարագրում է ժողովրդական դեղերը և նրանց հետ շաղկապված սնահավատությունները։ Այդ հետազոտության մեջ աղգագրագետը գտնում է իր եզրակացությունների համար բազմաթիվ կարևոր և ստուգված նյութեր։

Առաջինը, որը հատկապես աղգագրական ուսումնասիրության նպատակով և համապատասխան գիտական նախապատրաստությամբ ձեռնարկեց Զանգեզուրի հայերի աղգագրական նյութերի սիստեմատիկ հավաքումը, Երվանդ Լալայանն էր։ Նա, թե՛ ինքը, կրկնակի անգամ այցելելով հետազոտվող վայրերը և տեղում գրանցելով իր դիտողությունները և թե՛ իր աշխատանքներին ներգրավելով տեղացի գավառագետներին՝ կարողացավ հարուստ նյութ հավաքել ժողովրդական կենցաղի զանազան կողմերի մասին։ Այդ նյութերի ամփոփումը նա տվավ 1898 թ.՝ «Սիսիան» և 1899 թ.՝ «Զանգեզուր» հոդվածների մեջ, որոնք նախ լույս տեսան «Ազգագրական հանդէս»-ում և միաժամանակ արտատպվեցին առանձին գրքերով, որպես Ա և Բ հատորներ՝ «Զանգեզուրի գավառ» ընդհանուր վերնագրով։ Նման հետազոտությունների համար իր մշակած ծրագրի համաձայն այստեղ էլ Ե. Լալայանը համառոտ պատմական տեսությունից հետո կանգ է առնում շրջանի տեղագրության վրա և ապա հանգամանորեն նկարագրում է հայ բնակչության բնակարանը, զգեստն ու զարդարանքը, ընտանեկան բարքն ու ընտանեկան կյանքի կարևոր մոմենտները, ժողովրդական տոները և վերջում էլ կցում է մի քանի նմուշ ժողովրդական բանահյուսությունից։ Նա բավական ընդարձակ տեղ է հատկացնում հնագիտական և հատկապես եկեղեցական ճարտարապետական հուշարձանների նկարագրությանը և գրեթե չի շոշափում աշխատանքային պրոցեսները և սոցիալական երևույթները։

Հաջորդ և ժամանակով վերջին հետազոտությունը, որը նվիրված է Զանգեզուրի աղգագրական նկարագրությանը, լույս է տեսել 1931 թ. ռուսերեն լեզվով՝ «Научные записки Кавказского коммунистического Университета имени 26-и коммунаров» ժողովածուի I հատորի VI պրակում և միաժամանակ արտատպվել առանձին գրքով։ Հոդվածը պատկանում է պրոֆ. Գ. Ֆ. Զուրսինի գրչին և կրում է «Армяне Зангезура» վերնագիրը։ Հետազոտողն այդտեղ լայնորեն օգտագործել է թե՛ այն տվյալները, որ գտել է ռուսերեն և հայերեն հրատարակություններում, և թե՛ տեղում՝ որպես Անդրկովկասի կենտգործկոմին կից գործող «Ассоциация Востоковедения»-ի կողմից 1924 թ. գործուղած գիտարշավի անդամ՝ Զանգեզուրում անձամբ հավաքած տեղեկությունները։ Այդ հետազոտության դրական կողմերից մեկն այն է, որ հեղինակը՝ հենվելով կովկասյան ժողովուրդների և մասնավորապես հայ բնակչության կենցաղի մասին իր ունեցած բազմակողմանի ծանոթության վրա՝ փորձում է ցույց տալ Զանգեզուրի հայերի մեջ հայտնաբերվող այս կամ այն աղգագրական երևույթի տարածված լինելը նաև այլ գավառներում, առանց սակայն ձգտելու նրա տարածվածության արեալը որոշելու։

Պրոֆ. Զուրսինի հետազոտության լույս ընծայման նույն՝ 1931 թվականին Հայկական ՍՍՀ Պետական պատմական թանգարանի Աղգագրական բաժինը կազմակերպեց իր առաջին գիտարշավը դեպի Զանգեզուր, դեպի նրա՝ Սիսիանի և Գորիսի վարչական շրջաններն՝ իմ ղեկավարությամբ, բաժնի ավագ աշխատակցի՝ Եվգինե Գյոզալյանի և լուսանկարչի՝ Սուրեն Զալյանի մասնակցությամբ։ Գիտարշավի աշխատանքները տևեցին 43 օր՝ 1931 թ. օգոստոսի 30-ից